



ՄՈՌԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

I. ՄՈՌԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մոռացված լինելու իրավունքի վերաբերյալ քննարկումները սկսվեցին, երբ անհատները սկսեցին դատական կարգով պահանջել, որ որոնողական համակարգերի բազաներից հեռացվեն իրենց անձնական կյանքին վերաբերվող ոչ պատշաճ տվյալները (լուսանկարներ, տեսահոլովակներ, հոդվածներ և այլն): Մոռացված լինելու իրավունքի ծագումը սկիզբ է առնում այն փաստարկներից, որ ցանկացած տեղեկատվություն՝ ժամանակի ընթացքում կորցնում է իր կարևորությունը, ուստի մուտք գործելու հնարավորությունը դեպի այդպիսի տեղեկատվություն պետք է սահմանափակվի: Մի շարք երկրների ազգային օրենքներ հռչակում են, որ քրեական արձանագրությունները որոշակի ժամանակահատված անցնելուց հետո, պետք է ոչնչացվեն, որպեսզի հնարավորություն ընձեռեն անձանց վերաինտեգրվելու հասարակությանը: Քրեական օրենսդրությունը մի շարք երկրներում ամրագրված է, որ որոշ տեսակի հանցագործություններ կատարած անձինք, օրենքով նախատեսված ժամկետների սպառումից հետո, համարվում են հանցագործություններ չկատարածներ:

Նմանատիպ օրենսդրական դրույթները, անձանց հնարավորություն են տալիս զբաղվելու որոշակի գործունեությամբ առանց անցյալի սխալների մասին հիշատակման: Պրակտիկայում, սա նշանակում է, որ այդպիսի անձանց տվյալները «մաքրվում» են անցյալի սխալներից: Մի շարք երկրներում դատապարտված անձինք հնարավորություն ունեն դիմելու զանգվածային լրատվության միջոցներին հեռացնելու իրենց վերաբերյալ տպագրված հոդվածները²: ***«Մոռացված լինելու իրավունք»-ի էությունը կայանում է անձանց վերաբերվող որոշակի տեղեկատվության որոնումը դժվար կամ անհնարին դարձնել, անգամ եթե այդպիսի տեղեկատվությունը տարիներ շարունակ հայտնի է եղել հանրությանը:***

Ներկայումս, մոռացված լինելու իրավունքը բավականին դժվարությամբ է կիրառվում տարբեր երկրների օրենսդրություններում մի շարք հանգամանքներից ելնելով¹: Դժվար կիրառելիության առաջին պատճառը մոռացված լինելու իրավունքի ազդեցությունն է արտահայտվելու ազատության վրա: Որպես, երկրորդ պատճառ կարելի է մատնանշել օրենքի փոխազդեցությունը անձնական կյանքի գաղտնիության օրենքի հետ: Որպես երրորդ պատճառ կարելի է մատնանշել այն փաստը, որ մոռացված լինելու իրավունքը կհանգեցնի ինտերնետի որակի կրճատման, քանի որ այն կհանգեցնի գրաքննության և պատմություններ խմբագրելուն: Մոռացված լինելու իրավունքը արտացոլում է անհատի պահանջը ինտերնետային տիրույթից



հեռացնելու **իրեն վերաբերվող որոշակի տեղեկատվություն և այդ տեղեկատվությունը երրորդ անձի համար դարձնել անհասանելի**: Այս իրավունքը բնութագրվում է որպես կյանքի անցյալի և չկատարվող իրադարձությունները՝ լռության մատնելու իրավունք:

Մոռացված լինելու իրավունքը տարբերվում է անձնական տվյալների գաղտնիության իրավունքից, քանի որ անձնական տվյալների գաղտնիության իրավունքը վերաբերվում է տեղեկատվության, **որը հանրության համար անհասանելի է**, մինչդեռ մոռացված լինելու իրավունքը ներառում է հանրության համար որոշակի ժամանակով **հասանելի տեղեկատվությունը, որը երրորդ կողմի համար հասանելի չպետք է լինի**?



II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Եվրոպական միության արդարադատության դատարան

Մոռացվելու իրավունքը առաջին անգամ ամրագրվել է **Եվրոպական միության արդարադատության դատարանի** վճիռներից մեկում: 2010 թվականի մարտի 5-ին Իսպանիայի բնակիչ պարոն Մարիո Կոստեխա Գոնսալեսը բողոք է ներկայացրել Տվյալների պաշտպանության ազգային գործակալությանը ընդդեմ «Google Spain», «Google Inc» և «La Vanguardia Ediciones SL»-ի, որը լայնածավալ շրջանառություն ունեցող ամենօրյա թերթ է: Բողոքի փաստական հիմքը կայանում էր նրանում, որ «Գուգլ» որոնողական համակարգը շարունակում էր տվյալներ ներկայացնել Մարիո Գոնսալեսի անշարժ գույքի վերաբերյալ, որը 1998 թվականին աճուրդի էր հանվել վերջինիս սոցիալական ապահովության պարտքերի դիմաց, այն դեպքում, երբ համապատասխան վարույթը վաղուց կարճվել էր, ուստի այդ տեղեկատվությունը լիովին անտեղի էր: Գործակալությունը բողոքը «La Vanguardia Ediciones SL»-ի մասով մերժեց՝ պատճառաբանելով, որ տվյալ տեղեկատվության հրապարակումն իրավաբանորեն արդարացված է, քանի որ այն կատարվել է Աշխատանքի նախարարության և Սոցիալական հարցերով զբաղվող խորհուրդի հրամանով և միտված է եղել առավելագույն հրապարակայնություն ապահովել աճուրդին:

Ինչ վերաբերում է «Google Spain» և «Google Inc.»-ին, ապա վերջիններիս մասով բողոքը բավարարվեց հետևյալ հիմնավորմամբ՝ Որոնողական համակարգի օպերատորները պետք է հետևեն անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող օրենսդրությանը, քանի որ նրանք հանդիսանում են տվյալներ մշակող, ուստի և պատասխանատվություն են կրում իրենց կողմից մշակած տեղեկատվության համար՝ հանդիսանալով հասարակության տեղեկատվական միջնորդներ, և անձինք իրավունք ունեն պահանջել ընդհանուր հասանելիությունից այնպիսի տեղեկատվության հեռացում, որը կարող է վտանգել նրանց անձնական տվյալների պաշտպանության և արժանապատվության իրավունքը: Գործակալությունը համարեց, որ այդ պարտականությունը կարող է ուղղակիորեն դրվել որոնման համակարգի օպերատորների վրա, և իրավաչափ չէր լինի որպես պատասխանատվության սուբյեկտ դիտել նաև լրագրողին, որը տվյալ իրավիճակում գործել էր իրավաչափ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ դատարանը առաջ քաշեց հետևյալ հարցադրումները՝

1. Արդյո՞ք որոնողական համակարգի օպերատորի գործունեությունը կարելի է դիտել որպես տվյալների մշակում և վերահսկում 95/46/ԵՀ Դիրեկտիվի 2-րդ (բ, դ) հոդվածի իմաստով:



2. Արդյո՞ք որոնողական համակարգի օպերատորի վրա կարող է պարտականություն դրվել այս կամ այն կայքէջերից հեռացնել անհատական տվյալ պարունակող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ տեղեկատվության հրապարակումը ինքն իրենով համարվել է օրինական, սակայն որոշակի ժամանակ անց դարձել է անհամապատասխան, սահմանազանցող և ոչ համարժեք 95/46/ԵՀ Դիրեկտիվի նպատակներին:

3. Արդյո՞ք 95/46/ԵՀ Դիրեկտիվի 12-րդ հոդվածի «բ» ենթակետը և 14-րդ հոդվածի առաջին պարբերության «ա» ենթակետը պետք է մեկնաբանվեն այն համատեքստում, որ տվյալների սուբյեկտը կարող է պահանջել որոնողական համակարգի օպերատորից հեռացնել արդյունքների ցուցակից, երբորդ անձանց կողմից արված օրինական հրապարակումները կապված իր անվան հետ և իրեն վերաբերող, այն դեպքում, երբ տվյալ տեղեկատվությունը կարող է վնաս հասցնել անձին կամ այն դեպքում, երբ անձը ցանկանում է որ դա «մոռացվի» որոշակի ժամանակ անցնելուց հետո:

1. –ին հարցի վերաբերյալ

Ինչ վերաբերում է համացանցին, Դատարանը արդեն առիթ է ունեցել արձանագրել. Ինտերնետային էջում անձնական տվյալների բեռնումը պետք է դիտվի որպես «վերամշակում» 95/46 Դիրեկտիվի 2 (բ) հոդվածի իմաստով (տես՝ Գործ C-101/01 Lindqvist EU: C: 2003: 596, պարբ. 25): Ինտերնետում ավտոմատ կերպով, անընդհատ և համակարգված ուսումնասիրելով այն տեղեկատվությունը, որը հրապարակվում է այնտեղ՝ որոնիչ համակարգի օպերատորը «հավաքում է» տվյալներ, որոնք հետագայում բացահայտ և հասանելի են դառնում որոնման արդյունքների ցուցակների տեսքով: Դատարանը գտել է, որ օպերատորի գործողությունները կարելի է դիտել որպես տվյալների մշակում:

Դիրեկտիվի 2 (բ) հոդվածի իմաստով, անկախ այն հանգամանքից, որ վերջինս չի տարբերակում անձնական տվյալ համարվող եւ անձնական տվյալ չհամարվող տեղեկատվությունը: Որոնիչ համակարգի օպերատորը որպես տվյալների մշակման նպատակներն ու միջոցները որոշող անձը պարտավոր է իր պարտականությունների, լիազորությունների եւ կարողությունների շրջանակներում ապահովել, որ այդ գործունեությունը համապատասխանի Դիրեկտիվի պահանջներին, և այդ կերպ ապահովի անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիության իրավունքը: Ելնելով վերոգրյալից Դատարանը եզրակացրել է, որ

ա) որոնողական համակարգի օպերատորի գործողությունները, որի մեջ մտնում է տվյալների որոնումը, ավտոմատ ինդեքսավորումը, ժամանակավոր պահպանությունը և վերջապես



տրամադրումը համացանցի օգտատերերին, պետք է դիտել որպես անձնական տվյալների մշակում Դիրեկտիվի 2-րդ (բ) հոդվածի իմաստով այն դեպքում, երբ այդ տեղեկատվությունը պարունակում է անձնական տվյալներ,

բ) որոնման համակարգի օպերատորը պետք է դիտվի որպես վերահսկող սուբյեկտ Դիրեկտիվի 2-րդ (դ) հոդվածի իմաստով:

2. –րդ հարցի վերաբերյալ

Դիրեկտիվի պրեամբուլայի 25-րդ պարագրաֆի համաձայն՝ պաշտպանության սկզբունքները պետք է մի կողմից արտացոլվեն անհատների, պետական մարմինների, ձեռնարկությունների, գործակալությունների և մշակման համար պատասխանատու այլ մարմինների վրա դրված պարտավորություններում, մասնավորապես՝ տվյալների որակի և տեխնիկական անվտանգության, վերահսկիչ մարմինն տեղեկացնելու և մշակումն իրականացնելու պայմանների առնչությամբ, իսկ մյուս կողմից՝ այն անհատների՝ մշակման ընթացքի մասին տեղեկացված լինելու, տվյալների շուրջ խորհրդակցելու, ուղղումների կատարում պահանջելու և որոշակի հանգամանքներում մշակմանն առարկելու իրավունքին, որոնց վերաբերյալ տվյալները ենթակա են մշակման:

Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական Խարտիայի 7-րդ հոդվածը երաշխավորում է անձնական կյանքի հարգանքի իրավունքը, իսկ 8-րդ հոդվածը հստակորեն հայտարարում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Յուրաքանչյուր ոք ունի անձնական տվյալների շտկման իրավունք, որը ապահովված է նաև Դիրեկտիվով: Մասնավորապես՝ Դիրեկտիվի 12 (բ) հոդվածը նախատեսում է, որ **անդամ պետությունները պետք է երաշխավորեն վերահսկող սուբյեկտից պահանջել այն տվյալների ուղղումը, ջնջումը կամ արգելափակումը, որոնց մշակումը չի համապատասխանում սույն Դիրեկտիվի դրույթներին, մասնավորապես՝ տվյալների՝ թերի կամ ոչ ճշգրիտ լինելու պատճառով:** Դիրեկտիվի 6-րդ (դ) հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները ողջամիտ ամեն քայլ պետք է ձեռնարկեն ապահովելու համար, որ այն տվյալները, որոնք համարվում են ոչ ճշգրիտ կամ թերի՝ ելնելով այն նպատակներից, որոնց համար դրանք հավաքվել կամ հետագայում մշակվել են, ջնջվեն կամ ուղղվեն: Դատարանը անդրադարձել է նաև նրան, որ օպերատորը պարտավոր է հեռացնել արդյունքների ցուցակից անձնական տվյալ պարունակող տեղեկատվությունը նաև այն դեպքում, երբ այդ տեղեկատվությունը դեռևս չի ջնջվել նախապես կամ միաժամանակ այն կայքէջերից, որտեղ հրապարակվել է, ինչպես նաև այն դեպքում, երբ հրապարակումը ինքնին համարվում է օրինական:



- Մինևույն ժամանակ, դատարանը արձանագրել է, որ կախված ջնջվող կամ արգելափակվող տեղեկատվության բնույթից, դրա հեռացումը հանրամատչելի աղբյուրներից կարող է ոչ բարեհաջող ազդել հասարակության անդամների շահերի վրա, այն դեպքում, երբ հասարակության իրազեկվածության իրավունքը կարող է խախտվել: **Ուստի ամեն դեպքում պետք է ձգտել արդարացի հավասարակշռության հասարակության շահի և իրազեկվածության իրավունքի և անձի հիմնական իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիության միջև: Այս երկու իրավունքներին գերակայությունը տալու հարցում պետք է հաշվի առնել տեղեկատվության բնույթը, այն սուբյեկտին ու նրա գործունեությունը, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը: Դիրեկտիվի պրեամբուլայի 30-րդ պարագրաֆով սահմանված է, որ անհատական տվյալների մշակումը օրինական համարվելու համար պետք է ... իրականացվի որպես իրավական պահանջ կամ որոշակի առաջադրանքի կատարման համար՝ ելնելով հանրային շահերից կամ պաշտոնական լիազորությունների իրականացումից, կամ իրականացվի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օրինական շահերից ելնելով՝ պայմանով, որ տվյալների սուբյեկտի իրավունքները կամ ազատությունները չեն գերակայում: Անդամ պետությունները կարող են սահմանել այն պայմանները, որոնց դեպքում անհատական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին, օրինակ՝ ընկերությունների և այլ մարմինների կողմից իրականացվող սովորական օրինական գործարարական գործունեության համատեքստում կամ շուկայահանման նպատակներով՝ անկախ այն հանգամանքից՝ այն իրականացվում է առևտրային հիմունքներով, թե՞ որևէ բարեգործական կազմակերպության կամ որևէ այլ միավորման կամ հիմնադրամի կողմից, օրինակ՝ քաղաքական բնույթի՝ համաձայն այն դրույթների, որոնք թույլ են տալիս տվյալների սուբյեկտին առարկել իրեն վերաբերող անհատական տվյալների մշակման դեմ՝ առանց ծախսեր կատարելու կամ առանց հիմնավորումներ ներկայացնելու պարտավորության:**

3. –րդ հարցի վերաբերյալ.

Պատասխանելով վերջին հարցին՝ դատարանը արձանագրում է, որ Դիրեկտիվի 12-րդ հոդվածի իմաստով Դիրեկտիվի դրույթներին չհամապատասխանող պետք է համարել ոչ միայն այնպիսի տեղեկատվությունը, որը չի համապատասխանում Հրահանգի դրույթներին



տվյալների՝ թերի կամ ոչ ճշգրիտ լինելու պատճառով, այլև այնպիսի տեղեկատվությունը, որն այլևս անհամապատասխան, սահմանազանցող և ոչ համարժեք է մշակման նպատակների համատեքստում, կամ երբ նրանք պահպանվում են ավելին, քան անհրաժեշտ է, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց պահպանում է բխում է պատմական, վիճակագրական կամ գիտական նկատառումներից: Վերոգրյալից բխում է, որ **տվյալների անգամ ի սկզբանե օրինական մշակումը որոշակի ժամանակ անց կարող է դառնալ ոչ օրինական համապատասխան Դիրեկտիվին, երբ այդպիսի տվյալների գոյությունը այլևս արդարացված չէ այն նպատակների առնչությամբ, որոնց համար դրանք հավաքվել կամ մշակվել են:** Հետևաբար, այդպիսի տեղեկատվությունը ենթակա է հեռացման:

Այսպիսով, դատարանի վճռից կարելի է առաջ քաշել հետևյալ եզրահանգումները՝

- Մոռացվելու իրավունքը կարելի է բնորոշել որպես անձի իրավունքը, որոշակի հանգամանքների առկայության պարագայում, պահանջելու տվյալները մշակող կամ վերահսկող անձից՝ հեռացնել իրեն վերաբերող անձնական տվյալ պարունակող տեղեկատվությունը, այն դեպքում, երբ դա կարող է վտանգել անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության և արժանապատվության հիմնական իրավունքները:
- Անգամ այն տեղեկատվությունը, որի հրապարակումը եղել է օրինական, որոշակի ժամանակ անց կարող է դառնալ Դիրեկտիվի նպատակներին անհամապատասխան, սահմանազանցող և ոչ համարժեք՝ այդպիսով դառնալով անօրինական, և ենթակա հեռացման հանրամատչելի և ընդհանուր հասանելի աղբյուրներից:
- Ամեն դեպքում պետք է ձգտել արդարացի հավասարակշռության հասարակության շահի և իրազեկվածության իրավունքի և անձի հիմնական իրավունքների և ազատությունների միջև, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության և գաղտնիության: Այս երկու իրավունքներին գերակայությունը տալու հարցում պետք է հաշվի առնել տեղեկատվության բնույթը, այն սուբյեկտին ու նրա գործունեությունը, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը: Այդ նպատակով անդամ պետությունները կարող են նախատեսել այն հանգամանքները, որոնց դեպքում անհատական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին՝ անկախ այն հանգամանքից՝ այն իրականացվում է առևտրային հիմունքներով, թե՞ որևէ բարեգործական կազմակերպության կամ որևէ այլ միավորման կամ հիմնադրամի կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան



ՄԻԵԴ-ը կայացրել է նշյալից տարբերվող որոշում 2012 թվականի փետրվարի 7-ին *Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* գործով (Մոնակոյի քաղաքացի՝ արքայադուստր Կարոլինա ֆոն Հաննովերի և Գերմանիայի քաղաքացի, Արքայազն Էռնստ Ավգուստ Ֆոն Հաննովերի կողմից (դիմումատուներ) ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության): «Frau im Spiegel» ամսագրում երեք լուսանկար է հրապարակվել, որոնցից մեկում պատկերված էին իշխան Ռենեն և իր դուստր Ստեֆանին Սբ. Մորիցում զբոսանքի պահին՝ իրենց դահուկային հանգստի ընթացքում: Լուսանկարին կցված էր մի հոդված, որից պարզ էր դառնում, որ Մոնակոյի իշխանը վատառողջ է: Դիմումատուները պահանջել են դատական կարգադրություն արձակել գերմանական ամսագրերում լուսանկարների ցանկացած հետագա հրապարակման դեմ և մերժում ստանալով՝ հայտարարել, որ գերմանական դատարանների կողմից՝ իրենց լուսանկարների հետագա հրապարակումն արգելող դատական կարգադրության արձակման մերժումը խախտում է իրենց՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը:

Դատարանը նշել է, որ անհրաժեշտ է առաջնորդվել հավասարակշռության սկզբունքով և սահմանել է վերջինիս կիրառման համար նշանակություն ունեցող չափանիշները, այն է՝

- **Համընդհանուր հետաքրքրություն ունեցող քննարկմանը նպաստելը,**
- **Շահագրգիռ անձի հանրահայտ լինելու չափը,**
- **Հաղորդման առարկան,**
- **Շահագրգիռ անձի նախկինում դրսևորած վարքը,**
- **Հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները,**
- **Հանգամանքները, որոնցում արվել են լուսանկարները:**

Դատարանը նշել է նաև, որ որքան մեծ է տեղեկատվական արժեքը հասարակության համար, այնքան հրապարակումից պաշտպանված լինելու անձի շահը պետք է սահմանափակվի, և՛ ընդհակառակը: Թեև նշվում է, որ արտահայտվելու ազատությունը ներառում է նաև ժամանցային մամուլը, միևնույն ժամանակ դատարանը հաստատել է, որ ընթերցողի՝ զվարճացված լինելու շահն ավելի նվազ նշանակություն ունի, քան՝ անձնական ոլորտը պաշտպանելու շահը:

Տվյալ դեպքում դատարանը համարում է, որ դիմումատուները անկասկած չափազանց ճանաչված անձինք են և պետք է համարվեն հանրային գործիչներ: Հաշվի առնելով մրցակցող



շահերը հավասարակշռելիս ներպետական դատարաններին ընձեռված հայեցողության սահմանները՝ Դատարանը արձանագրել է, որ Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել:

Ֆրանսիան առաջինն էր, ով փորձ կատարեց ներպետական օրենսդրական համակարգում ներդնել համացանցում մոռացված լինելու իրավունքի հասկացությունը՝ 2010 թվականին ընդունելով Մոռացված լինելու իրավունքի վերաբերյալ խարտիան: Այն նախատեսում էր ներկայացված կարգավորումների կամավոր կիրառում խարտիային միացած կազմակերպությունների կողմից, սակայն այնպիսի մեծ կազմակերպություններ, ինչպիսիք են օրինակ Գուգլը կամ Ֆեյսբուքը չմիացան խարտիային:



III. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում «մոռացված լինելու իրավունք»-ին համապատասխանող հոդվածներ առկա են մի շարք օրենսդրական ակտերում: Նախ և առաջ նման հարաբերությունները կարգավորվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որը կարգավորում է **պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները**: Բացի այդ Հայաստանի Հանրապետությունը անդամ է հանդիսանում <<Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին>> միջազգային կոնվենցիային⁴, որը ստորագրված Եվրոպայի Խորհրդի անդամ հանդիսացող պետությունների կողմից: Կոնվենցիայի նպատակն է ապահովել յուրաքանչյուր Կողմի տարածքում յուրաքանչյուր անհատի, անկախ նրա քաղաքացիությունից կամ բնակության վայրից, իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես նրա գաղտնիության իրավունքի նկատմամբ հարգանքը՝ իրեն առնչվող անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ Հոդվածը սահմանում է, որ **անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով**⁵:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ Հոդվածի 8-րդ կետը սահմանում է, որ դատվածությունը **հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները**⁶:



IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ օրենսդրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի շրջանակներում հանրամատչելի տեղեկատվություն դիտել նաև անհատական տվյալ պարունակող այնպիսի տեղեկատվությունը, որի հետ կապված իրազեկվածությունը բխում է հասարակության շահերից, եթե անձնական կյանքի անձեռնմխելիության և արժանապատվության իրավունքը տվյալ դեպքում չի գերակայում:
2. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անօրինական պետք է համարել ոչ միայն այն անձնական տվյալները, որոնք ձեռք են բերվել անօրինական ճանապարհով, այլ նաև այնպիսի տվյալները, որոնք թեկուզև ժամանակին ձեռք են բերվել օրինական ճանապարհով, բայց որոշ ժամանակ անց սկսել են վտանգ ներկայացնել անձի անձնական կյանքի անձեռնմխելիությանը և արժանապատվությանը՝ դրանով իսկ անհամաչափ և անհամապատասխան դառնալով մշակելու օրինական նպատակին:
3. Առաջարկում ենք օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ հնարավորություն ընձեռելով զանցանք, դելիկտ և թեթև ծանրության հանցանք կատարած անձանց, իրենց վերաբերյալ դատական ակտերն հրապարակվելուց որոշակի ժամանակ անց, հնարավորություն ընձեռել համակարգչային կայքէջերից հեռացնել իրենց վերաբերյալ առկա տեղեկատվությունը:
4. Օրենսդրական մակարդակով սահմանել ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն մահացած կամ անհայտ բացակայող հանդիսացող անձանց հարազատներին՝ համապատասխան փաստաթղթերի ներկայացնելուց հիման վրա,
 - համացանցից հեռացնել իրենց հարազատների վերաբերյալ առկա, հանրության համար մեծ կարևորություն չներկայացնող տեղեկատվությունը, որը ինչ որ ձևով վիրավորում է հանգուցյալի պատիվն ու արժանապատվությունը,
 - սոցիալական ցանցերից ջնջել իրենց հարազատների սոցիալական էջերը:
5. Քաղաքացիներին հնարավորություն ընձեռել ինտերնետային որոնողական համակարգերից պահանջել հեռացնելու այնպիսի տեղեկատվությունը, որը ընդհանուր աղերսներ չունի իրականության հետ, և իր մեջ պարունակում է ոչ ճշգրիտ տեղեկություններ, նախկինում



2. Alex Hern, “ECJ to rule on whether right to be forgotten; can stretch beyond EU”, The Guardian, July 20, 2017,
3. Ալան Ուեյթին, «Գաղտնիություն և ազատություն», 1967:
4. «Ջնջելու իրավունք», Իրավունքի և տեխնոլոգիաների եվրոպական ամսագիր:
5. «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիա:
6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
7. ՀՀ քրեական օրենսգիրք: